Բանաստեղծությունը «Պարսեղ Ս. Մեսրոպ - Սանահին Ս.» ընտանեկան ամփոփումներ ունի Ամերիկայում գտնվող Հայաստանի գրողների միությունում։

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՐԿՐՈՐԴ ՇՔԱՆՇԱՆԸ ՎԱՐԱԶԴԱՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

(Անվանի ճարտարապետին հանձնվեց «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» շքանշան)

Փետրվարի 11-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» շքանշանը հանձնեց մեծանուն ճարտարապետ, ակադեմիկոս Վարազդատ Հարությունյանին:

Այս առիթով Վեհարանի դահլիճում տեղի ունեցավ հանդիսություն, որին ներկա էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբաններ, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ, գիտության և մշակույթի անվանի գործիչներ: Ներկայացվեց անվանի ճարտարապետի երկարամյա գործունեությունն ու եկեղեցանպաստ ծառայությունը, հնչեցին շնորհավորանքի և գնահատանքի խոսքեր, գեղարվեստական հայտագրով հանդես եկավ Մայր Աթոռի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի «Նավասարդ» երգչախումբը:

«Ձեր վաստակը մեծ է, և այդ վաստակը պարծանք է յուրաքանչյուր հայորդու համար»,- շնորհավորելով անվանի ճարտարապետին՝ ասաց Վեհափառ Հայրապետը:

Վարազդատ Հարությունյանը, լինելով հայկական ճարտարապետական հուշարձանների պահպանության նվիրյալ, կարևոր ներդրում ունի եկեղեցական շինությունների պահպանության և վերանորոգության գործում: Նրա անմիջական ղեկավարությամբ վերանորոգվել են հինգ տասնյակից ավելի վանական համալիրներ, որոնց թվում՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, Սուրբ Հռիփսիմեն, Սուրբ Գայանեն, Գեղարդը, Խոր Վիրապը և մի շարք այլ վանքեր ու եկեղեցիներ:

«Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» շքանշանը Հայ Եկեղեցու երկրորդ պարգևն է անվանի ճարտարապետին: Եկեղեցանվեր գործունեության համար Վ. Հարությունյանը նախկինում պարգևատրվել է նաև Հայ Եկեղեցու բարձրագույն՝ «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով:

94-ամյա ճարտարապետը լի է ավյունով և կրկին կարողանում է ունկնդիրներին հաճելիորեն զարմացնել հայ երգի գեղեցիկ իր կատարումներով:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ